ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՔ.

Ըստ առաջարկութեան հանգուցեալ Վեհափառ Հայրապետի Աղգիս և ԲԱՐՁՐԱԳՈՅՆ կամքը ՆՈՐԻՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ ամենայն Ռուսաց Նոր—Նախիջևանի և Բեսսարարիոյ Թեմ. Առաջնորդ Գեր. Մակար Արքեպիսկոպոսը նշանակուեցաւ Կաթուղիկոսական Տեղապահ Մայր Աթոռոյս և Անդամ Սինոդի Ս. Էջմիածնի

***

Ըստ առաջարկութեան հանգուցեալ Վեհափառ Հայրապետի Աղգիս և ԲԱՐՁՐԱԳՈՅՆ կամքը ՆՈՐԻՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ ամենայն Ռուսաց Գեր. Արիստակէս Եպիսկոպոսն Սեդրակեան կարգեցաւ Իմերէթի և Տփխեաց Վիճակի Թեմ. Առաջնորդ, որ և ուղևորեցաւ Փետր. 15ին ստանձնել իւր պաշտօնը. որին կատարեալ յաջողութիւն կբարեմաղթենք.

***

Ըստ կարգադրութեան Ս. Սինոդի բարեշնորհ Կարապետ Վարդապետն Տ. Գալստեան նշանակեցաւ Վանահայր Վանուց Ս. Գայանեայ ի տեղի Գեր. Արիստակէս Եպիսկոպոսի.

***

Ըստ կարգադրութեան Ս. Սինոդի Բարեշնորհ Սարգիս վարդապետն Տ. Գասպարեան արձակուեցաւ Նուխուոյ Ճաջորդութեան պաշտօնից և ի տեղի Նորա նշանակուեցաւ Գօրուոյ Ճաջորդ բարեշ. Գարեգին վարդապետն Սաթունեանց. իսկ ի տեղի վերջնոյս կարգեցաւ Ճաջորդ Գորուոյ բարեշ. Գէորգ Վարդապետ Տ. Մարտիրոսեանց.

***

Ըստ կարգադրութեան Ս. Սինոդի բարեշ. Գրիգոր վարդապետն Գառնակերեանց արձակեցաւ Հին—Նախիջևանի Ճաջորդութեան պաշտօնից և ի տեղի Նորա նշանակուեցաւ բարեշ. Յովհաննէս վարդապետն Երեմեանց.

***

Ըստ կարգադրութեան Ս. Սինոդի բարեշ. Գրիգոր վարդապետն Գառնակերեանց և Սարգիս վարդապետն Տ. Գասպարեանց նշանակեցան ընդհանուր ծախսարար Մ. Աթոռոյս ներկայ 1883 թուականի համար.

***

Ս. Սինոդի կարգադրութեան համաձայն արձակեցաւ Մայր աթոռոյս հիւրընկալութեան պաշտօնից բարեշ. Աստուածատուր վարդապետն և ի տեղի Նորա նշանակեցաւ Գրիգորիս վարդապետն տէր Ճակոմբեանց.

***

Ըստ կարգադրութեան Ս. Սինոդի Հռոմոսի վանուց վանահայր Ստեփաննոս վարդապետն Շիրակունի նշանակուեցաւ վանահայր Գանձասարու վանուց. իսկ Մայր Աթոռոյս միաբան Գասպար սարկաւագն Սլկունի նշանակեցաւ վանահայր Հռոմոսի վանուց.

***

***

Ըստ առաջարկութեան Կառավարչին Համախուց Թադէոս Եպիսկոպոսի և հաստատութեան Ս. Սինոդի նշանակեցան Համախուց Կոնստանդնուպոլսոյ նախանդամ բարեշ. Համազասպ վարդապետը, անդամք՝— բարեկ. Սարգիս քհ. Փիրվերտեանց և Գրիգոր քհ. Յովսէփեանց և Ատենադպիր—Պ. Աբրահամն Շահվերտեանց.

***

Համախուց Հայ հասարակութեան օրինաւոր ընտրութեամբ կարգեցան տեղւոյն թեմ. ուսումնարանի հոգաբարձուք Յակոբ բէկ Նիկիտեանց, Հայրապետ բէկ Մարգանեանց և Պ. Գէորգ տէր Յովհաննիսեանց և նոցա փոխանորդք—Ղազար բէկ Ամիրխանեանց, Յովսէփ բէկ Սերգէյեանց և Գաբրիէլ բէկ Թումանեանց.

Յուսալի է թէ Յարգելի Պարոնայք իւրեանց անձանձիր և արդիւնաւոր գործունէութեամբը կվերականգնեն և դէպի յառաջ կմղեն իւրեանց հոգաբարձութեանը յանձնուած թեմ. Ուսումնարանի նիւթական և ուսումնական գրութիւնը.

***

Ըստ կարգադրութեան Ս. Սինոդի ներկայ 1883 թուականում. Յունվարի 1ից Ս. Էջմիածնի Մայր տաճարի Երեցփոխանական պաշտօնը յանձնուեցաւ Վաղարշապատցի Պ. Յակոբայ Ազազատեանց.

Ի նկատի ունելով յիշեալ Պարոնի և նորա յարգելի հօր նոյն պաշտօնի մէջ ցոյց տուած հաւատարմութիւնն ու արդիւնաւորութիւնը, յուսալի է՝ թէ այսուհետև ևս կարդարացնէ Ս. Ատենակալաց յոյսը իւր հաւատարիմ և արդիւնաւոր պաշտօնավարութեամբը.

***

Ըստ տնօրէնութեան Ս. Սինոդի ի տեղի հանգուցեալ Նազարէթի Մովսիսեան՝ Թալինու կեդրոնատեղւոյ գործակալ նշանակուեցաւ Թալինու Խաչատուր քահանայն տէր Թադէոսեան.

ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ.

Ի 6 դեկտ. 1882 ամի. Որովհետև ըստ զօրութեան 42 յօդ. ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԳԱՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ յաղագս վարչութեան գործոց Եկեղեցւոյ Հայոց ի Ռուսաստան պարտանցի ի դէպս բացակայութեան կամ հիւանդութեան Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց՝ զտեղի նորա ունել երիցագունին յԱնդամոց Սինոդի, վասն որոյ ի պատճառս մանուան Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց Տեառն Գէորգայ Դ-ի ի 6 ամսոյս՝ կարեւոր վարկաւ Սինոդս նշանակել Տեղակալ հանգուցեալ Ատենապետի զերիցագոյնն յԱնդամոց Ս. Սինոդի զՄեկրտիչ Արքեպիսկոպոսն Բարամեանց, զի զպարտաւորութիւն իւր ըստ այսմ ներկայ պաշտաման վարիցէ համաձայն վերոյգրեալ օրինաց. իսկ զգործս սեղանական յատկապէս իրաւանց Կաթուղիկոսի՝ թողուլ ի Սինոդիս անկատար մինչև ցընտրութիւն եւ ցհաստատութիւն նորոյ Կաթուղիկոսի:

Ի 17 Դեկտ. 1882 ամի. Որովհետև թէպէտ Անդամ Սինոդիս զեր. Յովակիմ Եպիսկոպոսն Տէր Գրիգորեանց համաձայն խնդրանաց իւրոց յանուն հանգուցեալ